ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 22

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Արաքս Փաշայան
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ». ԵՐԿԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....7-21

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ (1981-2014 ԹԹ.).....22-34

Վահե Հակոբյան, Տաթևիկ Մկրտչյան, Հայկ Քոչարյան
ԹՎԻԹԵՐԻ ԱՐԱԲԱԼԵՋՈՒ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2020-2021ԹԹ.).....35-49

Տաթևիկ Մկրտչյան
ԻՄԱՄ ԱԼԻԻ ՆԱՄԱԿԸ ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇԹԱՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՎԱԽՈՒԹՅԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԻ ՆՄՈՒՇ.....50-61

Անանա Անտոնյան
ՏԱԲԱԿԱԹ ԺԱՆՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԱԲԱՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ.....62-75

Սպարտակ Բաղդասարյան
2005 Թ.-Ի ԻՐԱՔՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ.....76-94

Թյուրքագիտություն

Լուսինե Խաչատրյան, Անուշիկ Մարտիրոսյան, Ալեքսանդր Սաֆարյան
ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ÜZERE ԵՎ DİYE ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....95-109

Սամվել Ռամազյան
ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ «ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ 110-116

Թամարա Աղամալյան
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 1965-1969 ԹԹ. 117-131

Ալբինա Մուրադյան
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 132-152

Իրանագիտություն

Արփինե Առուշանյան
ՀՈԳՈՒ ՎԵՐԱՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԾԱՅՐԱՀԵՂ ՇԻԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՄ 153-167

Լիանա Պետրոսյան
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԻՀ-ՈՒՄ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2013ԹԹ.) 168-182

Ժաննա Վարդանյան *
ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ 183-195

***

Աշխեն Հովսեփյան
ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 196-204

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
Արտյոմ Տոնոյան
Հովհաննես Խորիկյան, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը, «Էլդորադո» հրատ., Հայաստանի Հանրապետություն, Գյումրի, 2021, 456 էջ: 205-211

CONTENT

Arabic Studies

Araks Pashayan
SAUDI ARABIA AND THE «ARAB SPRING». THE POLICY OF DOUBLE STANDARDS 7-21

Gor Gevorgyan
TRANSFORMATION OF EGYPT`S ARAB POLICY: OPPORTUNITIES AND CHALLENGES (1981-2014) 22-34

Vahe Hakobyan, Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan
DISCUSSION OF THE MAIN DISCOURSES OF THE 2020 44-DAY ARTSAKH WAR AND THE SUBSEQUENT PERIOD IN THE ARABIC-LANGUAGE TWITTER (2020-2021). 35-49

Tatev Mkrtchyan
IMAM ALI'S LETTER TO MALIK AL-ASHTAR AS A MODEL OF JUST GOVERNANCE/RULERSHIP, RELIGIOUS RIGHTEOUSNESS AND PIETY 50-61

Anna Antonyan
THE FORMATION OF THE ṬABAQĀT GENRE IN THE 9TH CENTURY ARAB-MUSLIM WRITTEN CULTURE 62-75

Spartak Baghdasaryan
THE 2005 IRAQI CONSTITUTION AND THE FORMATION OF A NEW SYSTEM OF GOVERNMENT 76-94

Turkic Studies

Lusine Khachatryan, Anushik Martirosyan, Alexander Safaryan
ON THE PECULIARITIES OF TEACHING TERMS FORMED WITH PREPOSITIONS ÜZERE AND DİYE OF THE TURKISH LANGUAGE AND THEIR COLLOCATIONS IN THE ARMENIAN LANGUAGE 95-109

Samvel Ramazyan
NEWLY DISCOVERED ARMENIAN PERSONAGES IN
THE TURKISH VERSIONS OF THE EPIC "KOROGLU" 110-116

Tamara Aghamalyan
IDEOLOGICAL BASIS OF THE REPUBLICAN PEASANTS'
NATION PARTY 1965-1969 117-131

Albina Muradyan
PUBLIC PERCEPTIONS AND MANIFESTATIONS OF RELIGIOUS
AND TRADITIONAL BELIEFS DURING
THE CORONAVIRUS PANDEMIC IN TURKEY 132-152

Iranian Studies

Arpine Arushanyan
THE IDEA OF THE TRANSMIGRATION OF SOULS
IN EXTREME SHIA SECTS 153-167

Liana Petrosyan
HUMAN RIGHTS AND FREEDOM OF SPEECH IN IRI DURING
M. AHMADINEJAD'S PRESIDENCY (2005-2013) 168-182

Zhanna Vardanyan
IRAN'S POSITION DURING AND AFTER
THE THIRD ARTSAKH WAR 183-195

***

Ashkhen Hovsepyan
ARMENIAN-INDIAN RELATIONS. HISTORICAL
OVERVIEW 196-204

BOOK REVIEW

Artyom Tonoyan
Hovhannes Khorikyan, The Administrative Divisions of Achaemenid
Iran, "Eldorado" publisher, RA, Gyumri, 2021, 456 p: 205-211

Լիանա Պետրոսյան[1]

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԻՀ-ՈՒՄ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2013ԹԹ.)

Բանալի բառեր. *ԻԻՀ, հոգևոր առաջնորդ, Մ. Ահմադինեժադ, մարդու իրավունքներ, խոսքի ազատություն, կանանց իրավունքներ, մամուլի ազատություն, ՋԼՄ:*

Մարդու իրավունքները հիմնականում որոշակի արտոնություններ ու ազատություններ են, որոնք պատկանում են աշխարհի յուրաքանչյուր անձի՝ ծնունդից մինչև մահ: Դրանք կիրառվում են անկախ այն բանից, թե որտեղից է անհատը, ինչ է դավանում կամ ինչպես է տնօրինում իր կյանքը: Մարդու իրավունքներն ու ազատությունները հնարավոր չէ խլել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք կարող են սահմանափակվել, օրինակ, եթե անձը խախտում է օրենքը կամ ազգային անվտանգության շահերից ելնելով: Մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային օրենսդրությունը պետություններին պարտավորեցնում է նպաստել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խթանմանն ու պաշտպանությանը:

Արևելքում և Արևմուտքում մարդու իրավունքները, մասնավորապես՝ կանանց իրավունքներն ու ազատությունները տարբերվում են միմյանցից, և կա տարածված մի կարծրատիպ, որ Արևելքում դրանք ոտնահարված են: Սակայն չպետք է մոռանալ, որ արևելյան երկրները ևս տարբերվում են միմյանցից, և դրանցից

[1] ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի, իրանագիտության ամբիոնի դասախոս: էլ. փոստ՝ lianapetrosyan@ysu.am

յուրաքանչյուրում կանայք տարբեր ազատություններ և սահմանափակումներ ունեն:

Եթե մարդու իրավունքների ազատությունների ու սահմանափակումների դիտանկյունից անհրաժեշտ լինի նկարագրել Իրանը Մ. Ահմադինեժադի նախագահության տարիներին, ապա այն կարելի է անվանել երկրի հասարակական-քաղաքական կյանքից «մտավոր վերնախավի դուրս մղման և վերջինների գործունեության սահմանափակման» շրջան: Պահպանողականների կողմից որպես գաղափարապես արևմտամետ ներկայացված ինտելեկտուալ վերնախավի կերպարը հանգեցրել էր այդ մտավորականների և հասարակական «ճնշված-անապահով» խավի միջև հսկայական ճեղքվածքի առաջացմանը: Մտավոր վերնախավի մարգինալացումը երկրում ստեղծել էր նոր ու անտրամաբանական քաղաքական մթնոլորտ, որն է՛լ ավելի էր խորացել գիտնականներին, նախկին վարչակազմի ու նախկին դեսպանների հետ կապված բարձրաստիճան պաշտոնյաներին և այն անհատներին հասարակական-քաղաքական դաշտից հեռացնելով, որոնք մասնակցել էին Մ. Խաթամիի վարչակազմի որոշումների ու քաղաքականության առաջնահերթությունների ձևավորման գործընթացին: Նախագահ Մ. Ահմադինեժադի կողմից կիրառված սահմանափակումները տվյալ անձանց համար անհնար էին դարձրել վերջինիս հետ աշխատելը: Փաստացի լավ որակավորված բարձրաստիճան պաշտոնյաները կամ դիվանագետները չէին վերանշանակվում իրենց պաշտոններում, քանի որ Մ. Ահմադինեժադի օրակարգի բաղկացուցիչն էր բարեփոխիչների «զտումը» քաղաքական համակարգից՝ կրոնի ու

հեղափոխության արժեքներին «բավարար ուշադրություն չդարձնելու» պատրվակով[2]:

2009թ. նախագահական վիճահարույց ընտրություններից հետո ներքաղաքական անհամաձայնության խորացումը միջազգային հանրության ուշադրությունը սևեռել էր Իրանում մարդու իրավունքների իրավիճակի վրա: Խոսքի ազատության սահմանափակումը և քաղաքականությունից դժգոհ քաղաքացիների նկատմամբ հետապնդումներն ու քաղաքական հակառակորդների, այդ թվում՝ նախագահին պարտված թեկնածու Մ. Հ. Մուսավիի ձերբակալումը ընտրությունների ավարտից հետո սաստկացրել էին աստվածապետական երկրում մարդու իրավունքների հետագա ճակատագրի շուրջ մտահոգությունները: Նույնիսկ 2009թ. իրադարձություններից առաջ «Տնտեսական հետախուզության ստորաբաժանման» 2008թ. ժողովրդավարության ինդեքսում Իրանը 167 երկրների շարքում զբաղեցնում էր 145-րդ տեղը՝ ներառվելով «ավտորիտար» համարվող 49 երկրների շարքում[3]: Երկիրը հաճախ մեղադրվում էր թերություններով լի, կեղծված կամ ոչ ազատ ընտրություններ անցկացնելու մեջ, որոնցից 2009թ. նախագահական ընտրությունները ամենաթարմ ու ակնհայտ օրինակն էին: Կառավարության քննադատողները հաճախ ենթարկվում էին կամայական ձերբակալությունների, ճանապարհորդական արգելքների, կալանքի, վատ վերաբերմունքի ու խոշտանգումների:

Փաստորեն, Իրանում մարդու իրավունքների վիճակը սկսել էր վատթարանալ հենց 2009թ. բողոքի ցույցերի ընթացքում, երբ քաղաքական ակտիվիստները, փաստաբանները, լրագրողները,

[2] Շուրջ 600 առանցքային քաղաքական գործիչների հեռացումն ուղղակիորեն ազդել էր կառավարության ընդհանուր գործունեության և սեփական առաջնահերթությունների իրագործման վրա:

[3] The Economist Intelligence Unit's Index of Democracy 2008, p. 7, https://graphics.eiu.com/PDF/Democracy%20Index%202008.pdf, (հսն. 30.08.2021).

ուսանողները, կանանց իրավունքների համար պայքարող ակտիվիստները, էթնիկ և կրոնական խմբերը թիրախավորվել էին կառավարական ուժերի կողմից: Հենց այս շրջանում էլ միջազգային հանրությունն առավել քան երբևէ ընդգծում էր Իրանում մարդու իրավունքների հիմնախնդիրն ուշադրության կենտրոնում պահելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իրանը վավերացրել էր «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը» (1975թ.) և «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը» (1975թ.)՝ առանց վերապահումների[4], պարտավորվելով պաշտպանել և խթանել քաղաքացիական, քաղաքական, տնտեսական և սոցիալական իրավունքները՝ ներառյալ խոսքի ազատությունը, հավաքների անցկացման ազատությունը, միություններ կազմելու և կրոնական դավանանքի ազատության իրավունքը: Նշենք, որ Իրանի Սահմանադրությունը նույնպես երաշխավորում է այդ ազատությունները[5]:

Միաժամանակ պետք է ընդգծել, որ ազատություններին վերաբերող Սահմանադրության որոշ հոդվածներ խիստ հակասական են, և դրանք հաճախ սահմանափակվում են տարբեր պայմաններով ու դրույթներով: Օրինակ՝ մամուլի ազատության վերաբերյալ ԻԻՀ Սահմանադրության 24-րդ հոդվածում ասվում է. «Զանգվածային լրատվության միջոցները ազատ են արտահայտելու իրենց գաղափարները, քանի դեռ դրանք չեն հակասում իսլամի հիմքերին կամ վնաս չեն հասցնում հանրային իրավունքներին: Այս պայմանները սահմանվելու են օրենքներով»[6]:

[4] Maǰmu'e-ye qavānin va moqararāt, sāl-e 1354-1355, čāp-e ruzname-ye rasmi, (Օրենքների և կանոնների ժողովածու, 1354-1355 (1975-1976) թթ., Պետական օրաթերթի տպագրություն), Tehrān, էջ 75, 445:

[5] Matn-e kāmel-e Qānun-e asāsi-ye ǰomhuri-ye Eslāmi-ye Irān hamrāh bā eṣlāḥāt-e sāl-e 1368 (ԻԻՀ Սահմանադրության ամբողջական տեքստը՝ 1989թ. փոփոխություններով), (30.05.2019), https://www.lu.ac.ir/uploads/123456_20436.pdf, (հսն. 30.08.2021).

[6] Նույն տեղում:

Ստացվում է, որ իշխանությունները ազատ են մեկնաբանելու հոդվածը՝ «ի պաշտպանություն իրենց քաղաքական և խմբակցային շահերի»:

2009թ. ցույցերից հետո միջազգային կազմակերպությունները Իրանի անվտանգության ուժերին և դատական համակարգին մեղադրում էին մարդու իրավունքների ոտնահարման մեջ: Իրանում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային արշավի գործադիր տնօրեն Հադի Ղաեմին գրում էր, որ 2009թ. բողոքի ցույցերից հետո «դատական համակարգը վերածվել էր հիմնական գործիքի ցուցարարներին ահաբեկելու և բազմաթիվ առաջատար ակտիվիստների մեկուսացնելու համար»[7]: ԱՄՆ պետդեպարտամենտի 2010թ. զեկույցում նշվում էր, թե Իրանի անվտանգության ուժերը ինչպես էին անպատժելիության մթնոլորտում մարդու իրավունքների լուրջ խախտումներ իրականացրել՝ ներառյալ խոշտանգումներն ու սպանությունները[8]: Թեհրանն իր հերթին մերժում էր այդ և նմանատիպ բոլոր պնդումները: Կարող ենք ենթադրել, որ Իրանում մարդու իրավունքների կոպիտ խախտումների մասին մեղադրանքները արևմտյան լրատվամիջոցների և ԱՄՆ-ի՝ հակաիրանական քաղաքականության մի մասն էին, որոնք ուղղված էին միջուկային ծրագրի հետ կապված պատժամիջոցների փոխլրացմանը:

Որոշ իրավապաշտպան խմբեր իրանական իշխանություններին մեղադրում էին մահապատիժ սահմանելու և այն որպես քաղաքական գործիք օգտագործելու մեջ: Մասնավորապես, ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի 2011թ. զեկույցում

[7] Doulatmardān-e ǰādugar va soquṭ-e goftemān-e siyāsi dar Irān (Վիուկ քաղաքական գործիչները և Իրանում քաղաքական դիսկուրսի անկումը), (09.05.2011a), https://www.bbc.com/persian/iran/2011/05/110509_iran_ahmadinejad_magic_government, (հսն. 30.08.2021).

[8] Bureau of Democracy, (11.03.2010), Human Rights and Labor, 2009 Human Rights Report: Iran, https://2009-2017.state.gov/j/drl/rls/hrrpt/2009/nea/136068.htm, (հսն. 30.08.2021).

նշվում էր ինչպես պաշտոնապես, այնպես էլ գաղտնի իրականացված մահապատիժների աճի մասին[9]: Մասնավորապես, 2005թ. հուլիսից 2006թ. հունվարն ընկած ժամանակահատվածի համար Amnesty International-ը հայտնում էր մահապատժի 69 գրանցված դեպքի մասին, որոնցից երկուսն անչափահաս էին: Իսկ արդեն 2006թ. մահապատժի էր ենթարկվել 177 մարդ: 2010թ., ըստ խմբի, այդ թիվը բարձրացել էր 388-ի և ավելիի, եթե դրանում ներառված լինեին գաղտնի իրականացված մահապատիժները[10]: ՄԱԿ-ի զեկույցում նշվում էր նաև 2010թ. մահապատժի դատապարտված 100-ից ավելի անչափահասների մասին՝ միաժամանակ շեշտելով, որ տասնութ տարեկանից ցածր անձանց մահապատժի կիրառումն անհամատեղելի էր Իրանի միջազգային պարտավորությունների հետ[11]: Ըստ էության՝ մահապատժի թիվը Մ. Ահմադինեժադի նախագահության ընթացքում՝ 2005թ. հետո, կտրուկ աճել էր՝ գագաթնակետին հասնելով 2011թ., որը հաստատվում էր Իրանում մարդու իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի՝ 2011թ. հոկտեմբերի հաշվետվությամբ[12]:

Հատկանշական է, որ մահապատժի դատավճռի էին արժանանում հիմնականում քաղաքական այլախոհները, ինչպես նաև սպանության, բռնաբարության, զինված կողոպուտի, հերետիկոսության, սրբապղծության, թմրանյութերի վաճառքի, մարմնավաճառության, ամուսնական դավաճանության, պետական դավաճանության ու լրտեսության մեջ մեղադրվողները:

[9] United Nations General Assembly, the situation of human rights in the Islamic Republic of Iran, (23.09.2011), Note by the Secretary-General, https://undocs.org/A/66/374, (հսն. 30.08.2021).

[10] Amnesty International, (28.05.2010), Amnesty International Report 2010 – Iran, https://www.refworld.org/docid/4c03a8235.html, (հսն. 30.08.2021).

[11] United Nations General Assembly, նույն տեղում:

[12] United Nations General Assembly, Report of the Special Rapporteur on the situation of human rights in the Islamic Republic of Iran, Human Rights Council, Nineteenth session, A/HRC/19/66, 6 March, (pdf), p. 8.

Հնարավոր է, որ մարդու իրավունքների ոտնահարման վերոնշյալ դեպքերը քաղաքական բնույթ էին կրում և սերտ կապ ունեին բնակչության նկատմամբ վերահսկողություն սահմանելու՝ Մ. Ահմադինեժադի ձգտման հետ: Արդեն 2010թ. սեպտեմբերին ԱՄՆ-ը պատժամիջոցներ էր սահմանել Իրանի դեմ մարդու իրավունքների ոտնահարման համար[13]: Իրանցի տասը պաշտոնյայի արգելվել էր մեկնել Միացյալ Նահանգներ, ինչպես նաև կիրառվել էին ֆինանսական սահմանափակումներ:

Եթե մարդու իրավունքների շարքում մասնավորեցնենք կանանց իրավունքները, ապա պետք է նշել, որ Իրանի Սահմանադրությունը տղամարդկանց և կանանց համար հավասար իրավունքներ է նախատեսում, սակայն այստեղ ևս կան որոշակի սահմանափակումներ. օրինակ՝ դատարանում կնոջ արժեքն ու ցուցմունքները համարվում են տղամարդու արժեքի ու ցուցմունքների կեսի կեսը: Կանայք չունեն ունեցվածքի ժառանգման իրավունք և սեփական երեխաների խնամակալներ չեն ճանաչվում անգամ ամուսնու մահից հետո: Մ. Ահմադինեժադի իշխանության տարիներին կանանց իրավունքներն ու ազատությունները մշտապես եղել են տեղացի և արևմտյան վերլուծաբանների ու հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այսպես, 2005թ. դեկտեմբերին Թեհրանի համալսարանի հարյուրավոր ուսանողներ ոստիկանության խստագույն հսկողության ներքո մասնակցել էին հակակառավարական ցույցերի՝ նշելու Իրանի ուսանողների ազգային օրը: Արդյունքում տասնյակ արական ու իգական սեռի ուսանողներ ձերբակալվել էին: 2006թ. հունիսին մի քանի հազար կանանց ու տղամարդկանց կողմից Թեհրանում կազմակերպված խաղաղ ցույցի անցկացման ընթացքում Պետական

[13] Wright R., U.S. Sanctions for Human Rights Abuses, (11.10.2010), https://iranprimer.usip.org/resource/us-sanctions-human-rights-abuses, (հսն. 30.08.2021).

անվտանգության ուժերի կողմից ձերբակալվածների թվում էր շուրջ հարյուր կին[14]: Աստիճանաբար իշխանությունները թիրախավորում էին այն կանանց ու աղջիկներին, ովքեր ուշադրություն չէին դարձնում իսլամական խստաբարո սոցիալական արժեքներին՝ կրելով ավելի կարճ, մարմինն ամուր գրկող բաճկոններ, կարճ տաբատ, փոքր շարֆեր և թեթև, գունավոր զգեստներ: Բացի այդ, ավելի քան 200 կին և տղամարդ ոստիկաններ էին տեղակայվել Թեհրանի փողոցներում՝ հետևելու այն կանանց, որոնք կրում էին «ազատառաճ» հագուստ[15]:

2007թ. կառավարությունը պատրաստել էր «Ընտանեկան պաշտպանության նոր օրինագիծ», որը կանանց իրավունքների հետագա սահմանափակումներ էր ներմուծել: Առաջարկվող օրինագծի որոշ հակասական դրույթներից էր 22-րդ հոդվածը, որը վերացնում էր ժամանակավոր ամուսնություններ՝ սիղէ գրանցելու ցանկացած պահանջ[16]: Իսկ 23-րդ հոդվածը թույլատրում էր բազմակնություն[17], ինչը պայմանավորված էր տղամարդկանց ֆինանսական կարողություններով[18]:

2009թ. հետո ընդդիմության նկատմամբ կառավարության վերաբերմունքի ընդհանուր կարծրացմանը համապատասխան՝ Իրանի կառավարությունը հայտարարել էր, որ կանանց թույլ չի

[14] Palgrave M., The Iran threat: President Ahmadinejad and the Coming Nuclear Crisis, Copyright © Jafarzadeh A., St. Martin's Press, LLC, New York, p. 229.

[15] Ḥemāyat-e Aḥmādinežād va polis-e āmniyyat-e axlāqi (Ահմադինեժադի և բարոյականության ոստիկանության հովանավորությունը), (28.07.2008c), https://www.radiofarda.com/a/o1_moral_police/404480.html, (հսն. 30.08.2021).

[16] Ժամանակավոր ամուսնությունը տղամարդկանց թույլ է տալիս մի քանի անգամ ամուսնանալ, որոնք կոչվում են sigheh: Դրանց տևողությունը տարբերվում է մի քանի րոպեից մինչև 99 տարի: Ժամանակավոր ամուսնության գրանցումը պահանջում է վերացնել այդ միություններում կանանց և նրանցից ծնված երեխաների ցանկացած ֆինանսական կամ իրավական պաշտպանություն:

[17] Հատկանշական է, որ չնայած բազմակնության օրինականացմանը, մեկից ավելի ամուսնությունների թիվը շարունակում է մնալ ցածր, ինչպես Իսլամական հեղափոխությունից առաջ էր: Ի հավելումն՝ ժամանակակից Իրանի բնակչության մեծամասնությունը չի ընդունում բազմակնությունը:

[18] Parsi R., նույն տեղում, էջ 67:

տրվի տարբեր բուհերում հաճախել այնպիսի դասընթացների, ինչպիսիք են ինժեներական կրթությունը, համակարգչային գիտությունը, անգլերեն գրականությունը և բիզնես ուսումնասիրությունները: Թեպետ նման որոշման համար կոնկրետ պատճառ չէր նշվել, սակայն կառավարությունը կոչ էր անում վերադառնալ ավանդական ընտանեկան արժեքներին և ծնելիության բարձր մակարդակին[19]:

Թեև արևմտյան վերլուծաբանները պնդում են, որ Իրանում կանայք տղամարդկանց գերիշխանության անդեմ զոհեր են, այնուամենայնիվ, պետք է ընդգծել, որ Իրանում շատ կանայք դարձել են հաջողակ ակտիվիստներ, քաղաքական գործիչներ և իրենց ընտրած ոլորտներում փոփոխությունների առաջամարտիկներ: Օրինակ՝ 2009թ. նախագահական ընտրություններում թեկնածու Մ. Հ. Մուսավիի տիկինը՝ Զ. Ռահնավարդը, գրավել էր ԶԼՄ-ների ուշադրությունը՝ հայտնվելով իր ամուսնու կողքին և նրա հետ ղեկավարելով նախընտրական հանրահավաքները, իսկ նախագահ Մ. Խաթամիի կառավարման շրջանում եղել էր նրա գլխավոր խորհրդականը[20]: Ինչ վերաբերում է նախագահ Մ. Ահմադինեժադի տիկնոջը՝ Ազամ Ֆարահին, ապա վերջինս ևս, ստանալով բարձրագույն կրթություն, դարձել էր Թեհրանի համալսարանի պրոֆեսոր: Շիրին Էբադին, թեև 2009թ. երկրից աքսորվել էր, սակայն առաջին իրանցին էր, որը Նոբելյան մրցանակի էր արժանացել Իրանում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում որպես փաստաբան կատարած աշխատանքների և Թեհրանում «Մարդու իրավունքների պաշտպանների» կենտրոնի հիմնադիր լինելու համար: Մասումե

[19] Sahraei F., Iranian university bans on women causes consternation, (22.09.2012), https://www.bbc.com/news/world-middle-east-19665615, (հսն. 30.08.2021).
[20] Heing B. M., Iranian Democracy: A Century of Struggle, Setback, and Progress, Washington University in St. Louis, All Theses and Dissertations (ETDs), Washington University in St. Louis, Missouri, Winter, p. 63.

էքթեքարը, դեռևս 1997թ. ստանձնելով Բնապահպանական կազմակերպության առաջին կին փոխնախագահի պաշտոնը, Մ. Ահմադինեժադի իշխանության օրոք ևս շարունակել էր իր ակտիվ հասարակական-քաղաքական գործունեությունը:

Ընդհանուր առմամբ պետք է փաստել, որ չնայած Մ. Ահմադինեժադի կառավարման տարիներին կանայք ամեն կերպ փորձում էին մասնակցել երկրի հասարակական-քաղաքական կյանքին և մեծ ակտիվություն էին ցուցաբերել Կանաչ շարժման ընթացքում, սակայն հասարակության մեջ կանանց տեղն ու դերը ոչ միանշանակ էր ընկալվում: Մի կողմից ամրապնդվում էր այն գիտակցումը, որ կինը բավարար գիտելիքներ ու գործնական հմտություններ ունի ընտանեկան եկամուտ ապահովելու համար և կարող է գործունեության բոլոր ոլորտներում տղամարդու համար գործընկեր լինել, իսկ մյուս կողմից՝ հիմնված կրոնական, պատմական, մշակութային և քաղաքական շարունակական ավանդույթների վրա, տիրում էր այն կարծիքը, որ կինը ստեղծված է ընտանեկան կյանքում ամուսնուն և երեխաներին ծառայելու համար:

Եթե փորձենք մարդու իրավունքների և խոսքի ազատության կողքին քննության առնել նաև մամուլի ազատությունը, ապա պետք է նշենք, որ Իսլամական հեղափոխությունից հետո ռադիոն և հեռուստատեսությունը դարձել էին մեկ պետական ընկերության՝ Իրանի ռադիոյի և հեռուստատեսության կազմակերպության մաս, որը սահմանադրորեն ենթակա է հոգևոր առաջնորդին: Հեռուստատեսության և ռադիոհեռարձակումների՝ պետության մենաշնորհի, լրատվական գործակալությունների նկատմամբ իշխանությունների վերահսկողության պայմաններում տպագիր մամուլը տեղական քաղաքական կենտրոնների համար իրենց քաղաքականությունը վարելու հիմնական դաշտ էր: Ավանդաբար իրանական մամուլը դասակարգվում է ըստ քաղաքական ու գաղափարական հայացքների՝ սատարելով

պահպանողականներին, բարեփոխիչներին ու կենտրոնախոհներին:

Ըստ էության՝ գրաքննությունը Իրանում կենտրոնացած էր իշխող վերնախավի իսլամական գաղափարախոսությանը հակասող անկախ մամուլի և լրագրողների տեսակետների վրա: Իրանի Սահմանադրության 24-րդ հոդվածը քաղաքացիներին տալիս է խոսքի ու կամարտահայտման ազատություն հրապարակումների և մամուլի միջոցով՝ պայմանով, որ դրանք չվնասեն իսլամի հիմնական սկզբունքները: Սահմանադրության շատ հոդվածներում ներառված իսլամական դրույթը փաստացի դարձել էր իշխանությունների գործիքներից մեկը պետության կողմից «սև ցուցակում» հայտնված հավատքի համակարգին դեմ արտահայտվող քաղաքացիներին ճնշելու համար: Արդեն 2009թ. հետընտրական բուռն գործընթացների արդյունքում իրանական իշխանություններն ուժեղացրել էին վերահսկողությունը ներքին տեղական խոշոր ԶԼՄ-ների վրա:

Ընդհանուր առմամբ պետք է փաստել, որ տեղեկատվական հոսքի համար 2006թ. պայքար էր սկսվել իշխանությունների ու հասարակության միջև: Առաջինները փորձում էին սահմանափակել տեղեկատվական հոսքերը, մինչդեռ վերջինները ալեհավաքների և արտասահմանյան լրատվականների միջոցով բավարարում էին իրենց «տեղեկատվական սովը»: Եվ հենց այս շրջանից սկսած բազմաթիվ լրագրողներ հայտնվում էին իշխանությունների թիրախում: Մասնավորապես, բարեփոխիչների ճամբարից հայտնի մտավորական և լրագրող Ռահիմ Ջահանբեգլուն ձերբակալվել էր ապրիլին Հոլոքոստի ժխտման վերաբերյալ Մ. Ահմադինեժադի հայտարարությունը քննադատելու համար[21]:

[21] Karlekar K. D., Marchant E., Freedom of the Press 2007: A Global Survey of Media Independence, Rowman & Littlefield Publishers, USA, p. 164.

Ամփոփելով Մ. Ահմադինեժադի կառավարման տարիներին մարդու իրավունքների, կանանց իրավունքների և մամուլի ազատության հիմնախնդրի ուսումնասիրությունը՝ կարելի է եզրակացնել.

- Թե՛ Իրանում, թե՛ դրա սահմաններից դուրս իրավապաշտպանները բազմիցս շեշտում էին, որ Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ միջազգային ուշադրությունը խոչընդոտում էր մարդու իրավունքների ոլորտում իրականացվող բարեփոխումներն առաջ տանելուն: Ըստ էության՝ միջուկային էներգետիկայի շուրջ զարգացումները Իրանում փակում էին բազմաթիվ այլ խնդիրների օրակարգայնացումը, որոնցից ամենակարևորը մարդու իրավունքների հարցն էր:
- Արդեն Մ. Ահմադինեժադի պաշտոնավարման երկրորդ փուլում զանգվածային ու կամայական ձերբակալությունների կիրառմամբ կառավարությունը փորձում էր ճնշել այլախոհությունը և երկրից վտարել հակակառավարական հայտարարություններով հանդես եկող լրագրողներին: 2009թ. Իրանը դասվում էր այն երկրների թվին, որտեղ լրագրողները ամենաշատն էին ենթարկվում սահմանափակումների և անգամ ազատազրկման: Իրանական իշխանությունները համացանցում իրականացնում էին աշխարհի ամենախիստ գրաքննությունը՝ արգելափակելով հազարավոր կայքեր՝ ներառյալ լրատվական կայքերն ու սոցիալական ցանցերը:
- 2005թ. ի վեր երկրում արևմտյան մշակույթի դեմ առավել մեծ արշավ էր սկսվել, քան նախկինում էր: Պաշտոնավարման առաջին իսկ ամիսներից Մ. Ահմադինեժադը արգելել էր երկրում արևմտյան երաժշտությունը: Աստիճանաբար սահմանափակումներն ու արգելքները տարածվել էին նաև արևմտյան ֆիլմերի ու գրականության վրա:

 Կանայք կազմում են Իրանի բնակչության գրեթե կեսը, ուստի պատահական չէ, որ ցանկանում են լսելի լինել հանրության շրջանում և առավել շատ հնարավորություններ ստանալ ինքնադրսևորման համար: Գաղտնիք չէ, որ Իրանում, իսլամական գաղափարախոսությամբ պայմանավորված, առկա է գենդերային տարբերության և գենդերային անհավասարության պրակտիկա: Կանանց առաջխաղացման խոչընդոտները կարող են սահմանվել որպես ավանդական, սոցիալական, մշակութային ու իրավական: Հարկ է նշել, որ գենդերային հարաբերությունները որոշվում և ներազդվում են այնպիսի գործոններից, ինչպիսիք են պետական գաղափարախոսությունը, տնտեսական առաջընթացի մակարդակը, կանանց պայքարն ավելի լավ պաշտոնների համար, իրավական/ենթակառուցվածքային տարրերը, ինչպիսիք են կանանց կրթության և արհեստավարժության տոկոսն ու որակը, աստիճանն ու գլոբալ ինտեգրումը: Այնուամենայնիվ, կարելի է պնդել, որ հիմնվելով վերոնշյալի վրա՝ Իրանում կանանց սոցիալ-քաղաքական ներգրավվածությունը դեռևս ցածր է տղամարդկանց ներգրավվածությունից, բայց աստիճանական բարելավման միտումներն ակնառու են:

 2009թ. նախագահական ընտրություններին ընդառաջ կանայք մեծ ակտիվությամբ աշխատում էին նախընտրական շտաբներում և ձգտում էին կառավարության մաս կազմել, ուստի վերընտրվելուց հետո Մ. Ահմադինեժադը մի քանի կին էր ընդգրկել նախագահական կաբինետում: Ընդ որում՝ պետք է նշել, որ բարձրագույն հոգևորականության ոչ բոլոր ներկայացուցիչներին էր գոհացրել նախագահի այդ քայլը:

 Արդեն 2009թ. նախագահական ընտրություններից հետո Մ. Ահմադինեժադը կորցրել էր պահպանողական խմբակցությանը սատարող կանաց աջակցությունը ցուցարարների դեմ

անվտանգության ուժերի կողմից իրականացված ճնշումների պատճառով:

 Ընդհանուր առմամբ պետք է փաստել, որ իրանական մեդիա դաշտում, ինչպես աստվածապետական ռեժիմի շատ ասպեկտներում, առկա են բազմաթիվ տարամետ երևույթներ: Տեղեկատվության հոսքը դեպի Իրան և հենց երկրի ներսում դրա շրջանառումը իրապես բարելավվել է միայն վերջին տասնամյակում: 2000թ. ի վեր Իրանի առաջնորդները տատանվում էին երկրի ներքին լրատվամիջոցների նկատմամբ սահմանափակումների խստացման ու թուլացման միջև: Թեև Իրանի ռեֆորմիստական լրատվամիջոցները կրում են ֆինանսավորման կրճատումներ և հաճախ փակվում են, պահպանողական թերթերը այժմ ավելի հաճախակի են քննադատում կառավարության քաղաքականությունը:

 Քանի որ ժամանակի ընթացքում Իրանում լրագրողների նկատմամբ սահմանափակումներն աճեցին, հաղորդակցման և տեղեկատվության փոխանակման այլընտրանքային մեթոդները ևս ավելացան: 2000-ականներից անկախ թերթերն արմատախիլ անելու արշավը շատ լրագրողների ստիպեց նահանջել տպագիր մամուլի ասպարեզից և փոխարենը աշխատանքն իրականացնել համացանցային կայքերում: Այսպիսով, համացանցը իրանցիներին հնարավորություն է տալիս խուսափել կառավարության գրաքննությունից և որոշակիորեն զերծ մնալ գաղափարների ու խոսքի ազատ արտահայտման սահմանափակումներից:

 Ըստ էության՝ Մ. Ահմադինեժադի կառավարման տարիներին «ազգային անվտանգության» երաշխիքի պահպանման նկատառումներից ելնելով՝ խստացվել էին հավաքների և խոսքի ազատության սահմանափակումները:

ПРАВА ЧЕЛОВЕКА И СВОБОДА СЛОВА В ИРИ В ГОДЫ ПРЕЗИДЕНТСТВА М. АХМАДИНЕЖАДА (2005-2013 ГГ.)

Лиана Петросян

(Резюме)

В Иране права человека, ограничения прав и свобод женщин, а также вопросы свободы печати и слова всегда были в повестке дня забот и интересов международного сообщества и иранского общества, и получил новые проявления во время президентства М. Ахмадинежада.

В статье показано, что ограничения свободы слова и печати стали более очевидными и стали предметом дискуссий после президентских выборов 2009 года, когда были подавлены протесты Зеленого движения. Репрессии иранского режима в отношении свободы слова сказались на иранских гражданах за пределами Интернета и в реальном мире. Группы граждан, журналисты и правозащитные организации как в Иране, так и за его пределами требовали от правительства сократить механизмы репрессий.

HUMAN RIGHTS AND FREEDOM OF SPEECH IN IRI DURING M. AHMADINEJAD'S PRESIDENCY (2005-2013)

Liana Petrosyan

(Summary)

In Iran, human rights, restrictions on the rights and freedoms of women, as well as issues of freedom of the press and speech have always been on the agenda of the concerns and interests of the international community and Iranian society, and received new manifestations during the presidency of M. Ahmadinejad.

The article shows that restrictions on freedom of speech and the press have become more apparent and have been the subject of debate since the 2009 presidential election, when the protests of the Green Movement were suppressed. The Iranian regime's crackdown on freedom of speech has affected Iranian citizens offline and in the real world. Citizens' groups, journalists and human rights organizations both inside and outside Iran have demanded that the government cut back on the mechanisms of repression.